ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- դեկտեմբերի 2022 թվականի №---Ա
ք.Երևան

«ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ №0278 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՀԱՅՏԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի №716Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2022 թվականի նոյեմբերի 29-ի և դեկտեմբերի 14-ի գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 15 տարով երկարաձգել Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի №761Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Լեռ էքս ՀԷԿ-6» փոքր հիդրոէլեկտրակայանում՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0278 լիցենզիայի (այսուհետ՝ №0278 լիցենզիա) գործողության ժամկետը, որն ավարտվում է 2022 թվականի դեկտեմբերի 28-ին: Ընկերությունը գրությանը կից ներկայացրել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից «Լեռ-էքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ 2007 թվականի սեպտեմբերի 29-ին տրամադրված №1529 ջրօգտագործման թույլտվությունը, որի գործողության ժամկետը մինչև 2008 թվականի հունվարի 26-ն է,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 77-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված արտադրության

ժամանակահատվածի երկարաձգման հայտն ի թիվս այլնի պետք է պարունակի նաև ջրօգտագործման թույլտվությունը,

գ) Կարգի 79-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման հայտը մերժում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկությունները թերի են կամ չեն համապատասխանում Կարգի պահանջներին,

դ) «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել լիցենզիայի գործողության ժամկետը լրանալու դեպքում, նույն մասի վերջին պարբերության համաձայն՝ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջոցով,

ե) №0278 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ Ընկերության 2022 թվականի նոյեմբերի 29-ի և դեկտեմբերի 14-ի գրությունների ուսումնասիրության արդյունքում փաստվել է, որ Ընկերության ներկայացրած փաստաթղթերը թերի են և չեն համապատասխանում Կարգի պահանջներին: Մասնավորապես, Ընկերությունը մինչև սույն որոշման կայացումը չի ներկայացրել գործող ջրօգտագործման թույլտվություն: Նշվածը, Կարգի 79-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, հիմք է երկարաձգման հայտը մերժելու համար և հաշվի առնելով, որ №0278 լիցենզիայի գործողության ժամկետը լրանում է 2022 թվականի դեկտեմբերի 28-ին, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը ենթակա է դադարեցման, և

հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 12-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 37-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Կարգի 79-րդ կետի 1-ին ենթակետը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Մերժել Ընկերության կողմից 2022 թվականի նոյեմբերի 29-ի և դեկտեմբերի 14-ի գրություններով Հանձնաժողով ներկայացված №0278 լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտը:
2. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի «ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Լեռ-

էքս- ՀԷԿ-6» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №716Ա որոշումը:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ «Լեռ-էքս-ՀԷԿ-6» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող էլեկտրական էներգիայի գնման «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված 15 տարվա երաշխիքի ժամկետը լրանում է 2022 թվականի դեկտեմբերի 28-ին:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, բացառությամբ 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2022 թվականի դեկտեմբերի 29-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- դեկտեմբերի 2022թ.